

ՅԱԿԵԼՈՒԱԾ „ԱՐԱՐԱՏ“-Ի 1902 Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ

2. № 102, Գէորգ. ցուց. թուղթ, երկա-
թագիր, գրուած Հայոց ՆԻ—ՆԼ [=Փրկչ.
971—981] թուին:

[էջ 182^բ]

Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ
Որ անէ եւ նուազէ ապականացու է. եւ վասն զի մար-
մինն Քրիստոսի անէր եւ զարգանայր եւ ապականա-
ցու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր՝ վկայութիւնք սրբոց
⁵ եւ աստուածազանից, որք անապական խոստովանին
յարգանդէ եւ յաւիսեանս յաւիսենից:

ՍՏԵՓԱՆ ՆՈՍԻ Ի ՄԱՍՏԱՍԻՐԻ ԱՍԱՅԵԱԼ.*

[Ա..]

Աստուածազան գրեցեալ գիրք զշնորհս Հոգւոյն սրբոյ
ածել եւ նուազել եւ աշխատել եւ հանգչել ասեն եւ ոչ եր-

*) Ստ-ի այս գրութիւնը «երեւութականներից» մեզ հա-
տած միակ նշանաւոր վաւերագիրն է, որ մեծ լոյս է սփռում
ուրեքորդ դարի առաջին կիսի, մասնաւորապէս Մանագիւղի
ժողովի ցարդ այնքան վիճելի պատմութեան վրայ: Օձնեցին եւ
Խոսրովիկ, ինչպէս յայտնի է, գրել են ընդդէմ «երեւութա-
կանների», որոնց պարագլուխներից մէկն է այս Ստեփանոս Իմաս-
տասէրը, որ մեր կարծիքով է նոյն ինքն Ստեփանոս Սիւնեցին:
Այս Ստեփանոսն եւ Թէոդորոս Բագէնը—Թէոդորոս Բզնունեաց
Եպիսկոպոսն «երեւութականների» պարագլուխներիցն են: Հակա-
ռակ կուսակցութեան—այն է կեդրոնի—ներկայացուցիչներն են
Օձնեցին, Խոսրովիկ եւ այլն: Այս գրուածքով պարզ դադարիար
ենք կազմում 2 — 3 դարերի կրօնական-դաւանաբանական մեծ
վիճերի եւ կուսակցութեանց մասին Հայաստանում: Ստեփանոսը
ճիշտ այնպիսի հակառակորդ է Օձնեցուն, ինչպէս 10-դ դարում
Խոսրով Անձնացին Անանիա Մոկացուն: Արժանի է ուշադրու-
թեան, որ երկու դէպքերումն էլ Վասպուրականն եւ Սիւնիքն
են ընդդէմ կեդրոնական իշխանութեան, կամ կեդրոնական իշ-
խանութեան պաշտպանած վարդապետութեան: Առ այժմս բա-
ւականանում ենք այս «երեւութական» նշանաւոր վաւերագիրը
հրատարակելով, վերապահելով մեզ այս ինդրին վերագառնալ
մի ուրիշ անգամ:

Գալուստ Տէր-Մկրտչեան

Տող 1 ձեռագրում [ՃՂ.2 հատուածաթիւ 8 2. գրեցեալ

40 բերք ապականացու. և այս ցուցանի վեցեկին տարապալ, զաճական և զնուազական անապական, և զոչ աճական և զոչ նուազական ապականացու, այսպէս:

[Ա.] Ապականացու անապականութեամբ աճեալ և նուազեալ, որք ի լինելութեան և յապականութեան են
45 բնութեամբ:

[Բ.] Ապականացու անապականութեամբ աճեալ և նուազեալ, որպէս արտաքոյ բնութեան, աստուածային սքանչելեալ առ Եղիսէիւ մարգարէիւ իւզն | աճեցեալ ամենայն յաղթութեամբ, և առ Տերամբ մերով նկանակքն
20 և ձկուհքն:

[Գ.] Անապական՝ անապականութեամբ աճեալ և նուազեալ, որպէս կողն առ Աղամ՝ նուազեալ և առ կինն աճեցեալ, այսինքն է յառնուլն նուազեալ և [ի]նուլն աճեցեալ:

25 [Դ.] Անապական՝ անապականութեամբ ոչ աճեալ և ոչ նուազեալ — աստուածայինքն, զի զհրեշտակայինն թողաք, զի ըստ հարանցն սրբոց՝ է և ի նոսա աճման աւրինակ անհանդիպելի մարդկային խորհրդոց ըստ Գրիգորի Նիւսացոյ, զոր ի Գիրս Վազմութեանն ցուցանէ:

30 [Ե.] Ապականացու ան[ապական]աբար ոչ աճեալ և ոչ նուազեալ, որպէս Խորայէղ յանապատին ի հերս և յղընգունս և ի զգեստս:

[Զ.] [Ապականացու] ապականացուաբար ոչ աճեալ և ոչ նուազեալ՝ բնութիւնս մեր որ ըստ սաղմանի, որ
35 ի սեռէ է և գոյացուցիչ զանազանութեանց են, յԱղամայ մինչև ցկատարումն աշխարհիս. նոյն աւրինակ սաղմանի և յայլ կենդանիս նովին աւրինակաւ:

Արդ եթէ զնախնի մարդոյն զմարմինն ստեղծանէր

զըեցեալ 10 2. զ՛կն 18 2. մարգարիւ 2. եջ 183 ա 26 2. զհրաշտակայինն 30 2. ապականացուանաբար 31 2. իէղ 32 2. ի սգեստս 33 2. իմ փակագծուած բառը 38 2. էթէ 2. ստեղծաներ

յերկրէ անապական՝ Բանն Աստուած, զիւր ոչ կարէր
 40 անապական ստեղծանել յարգանդի կուսին. և որ զիս-
 րայէղ զդառնացուցիչ տունն պահեաց անապական ի ծայրս
 և զգետան, և զմանկանց մարմինսն և զհանդերձս, զիւր
 մարմին ոչ կարէր անապական պահել ամենայնիւ: Եւ
 եթէ տարակուսիս ընդ անապական մարմին Բանին Աս-
 45 տուծոյ, նախ տարակուսեցիր ընդ կուսութեամբն յղու-
 թիւնն [ի ծ]նունդն, զի ասէ՝ զայր ոչ գիտեմ, և
 զոր ծնաւ արմատ ի ծարաւուտ երկրի, արմատն Յեւ-
 [սե]այ, և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց՝ զրէթէ
 ապականացու էր մարմինն ըստ քում լեզուադարութեանդ:
 50 Գեղարգն և բեհռացն վերքն ընդէ՞ր նոյն աւրինակ մնա-
 ցին — ի ցուցանել աշակերտին, կամ ի միւսանգամ գա-
 լստեանն Հայեցին ի նա՝ յոր խոցեցինն: Եւ հասարա-
 կաց մարմնոյ ոչ էր համեմատ մարմինն տերունոյն, զի որք
 յառնեն ի մեռելոց ոչ ունին վերս և ոչ խոցումն, այլ
 55 զի գիտացես թէ և ի ծննդենէն մինչև յարութիւնն և
 յարութենէն մինչև ցհասարակաց յարութիւնն նոյնաւ-
 րինակ ուն՝, զմարմինն: Այլ ըստ ժամանակին թողացու-
 ցանէր որպէս և ինքն Հայր, աւրինակ՝ ի մորենոջն, քանզի
 հուր բորբոքեալ երեւէր Մովսիսի. և այլ աւրինակ՝ յոր-
 60 ժամ ծածկեաց զնա ի փայտար վիմին, և այլ կերպաւք՝
 նահապետին Աբրահամու, ի նմանութիւն արանց ուղեո-
 րաց քաղցելոց և աշխատելոց: Նոյն աւրինակ և Տէր
 մեր: Այլ աւրինակ՝ նովին մինչև ցերեւուն ամն անապա-
 կան մարմնովն ի ծածկութեան և ի հնազանդութեան, և

39 2. կարէր 40 2. զե՞ղ 42 2. սգետան 46 2. երկու կամ երեք
 քառ կարմրադեղով ընջած 47 2. ի ծարուտ Հմմտ. «Իբրեւ զարմաս
 ի ծարաւուտ երկրէ». Ես. ԾԳ. 2. 2. յեսայ. Հմմտ. «Արմասն Յես-
 սեայ». Հռոմ. ԺԵ, 12. Ես. ԺԱ, 1. 48 2. զրէթէ 49 2. ապակա-
 նացուեր 51 2. գալըստեանն 52 2. հայեցին ի նայ. Յովն. ԺԹ,
 37. 53 2. ոչ էր 54 2. այն զի գիտացես 56 2. ընցհասարակաց
 58 2. ինք 59 2. մուսեսի 60 2. ի փայտար 61 2. նախապետին
 63 2. մինչև ցլ

- 63 զինի այնորիկ մինչև ցիւանն աստուածային օքանչեյագործութեամբ և վարդապետութեանն իշխանութեամբ և հրամանին ճոխութեամբ, և յանմ' անխն հանգստեամբ ի բարեբանեայ աւուրն: Իսկ զինի յարութեանն | հաստատելով զյարութեանն կերակրովքն և լուսաւո-
- 70 բագոյն տեսութեամբն, և զցրուեալ և զտարակուսեալ աշակերտսն հաստատէր ի հաւատսն յարութեանն, ժողովելով առ ինքն բազմաւրինակ երեմամբն: Իսկ ի միւսանդամ գալստեանն վառաւք և զարութեամբ և աստուածային հրաշագործութեամբ ի բոց հրոյ, տոնել
- 73 վրէժխնդրութիւն այնոցիկ որ ոչ հաւատացին աւետարանին: Եւ եթէ ըստ կաթինն և ըստ կերակրոյն ասացես ապականացու, ապա և յետ յարութեանն եկեր ընդ աշակերտսն: Եւ եթէ ըստ խոցմանն ասիցես ապականացու, ապա և զինի յարութեանն: Եւ որ առնուս վիս-
- 80 յութիւն զՊաւղոսի առաքելոյ ասելն, թէ Յարոյց զնա ի մեռելոց և ոչ ևս դառնալոց է յապականութիւն, զայս ակնարկութիւն տալով, թէ ապականութիւն ունէր յառաջ, ոչ որ ի հերձուածոգաց ասաց զայդ, ոչ նստոր և ոչ նախ քան զնա, զի ապականացու ասեն, այլ ոչ ապա-
- 85 կանեալ, թէպէտ և նոյն միաք են ապականացու ասել, զի մահկանացուն ի հարկէ մեռանի և ապականացու[ն] նոյն աւրինակ: Զի՞նչ տոնիցես զմարդարէին բանն որ ասէ, թէ Հոգի որ ելանէ՝ այլ ոչ ևս դառնայ, եթէ ոչ դառնայ զիմարդ զգնուե մարմին միւսանդամ: Արդ՝ ըստ
- 90 քում առարկութեանդ դառնալոց է միւսանդամ յապականութիւն, որպէս Ովրոգէնէս իշխեաց ասել՝ դարձեալ խաչ և չարչարանք և կրկին յարութիւն: Այլ գիտա՞ զի

67 2. երկու քառ խոնարսիւնից եղծուած 68 2. իսկ զինի յարութեանն իսկ զինի յարութեանն 69 2. եջ 183 բ 75 2. վրէժխնդրութիւն 76 2. էթէ 78 2. էթէ 80 2. յարոց 81 2. դառնալոց լուսանցումն ե. 80—81 Գործք Առ. ԺԳ. 34. 83 2. զայս յետոյ ուղղուած զայս. դ.—զայդ 85 2. թեպէտ 87 2. տոնեցես 88 Սաղմ. 45. 39. 89 2. դառնա 2. սգենու 90 2. առակութեանդ 91 2. որպէս

բազում իրք յաստուածային զիրս ի հասարակէն ասին,
 ոչ հաստատելով, այլ ի բաց բառնալով. որպէս և Սեբ,
 93 առաքեալն ասէ, թէ ոչ վասն արդարութեանց մերոց զոր
 արարաք. «չ զնէ աստ, այլ ի բաց բառնայ, սոյնպէս և
 զայն հրաժարեցուցանէ ասելով՝ Ո՛չ դառնալոց է յայն որ
 ոչն էր: Եւ դարձեալ զի խոնարհեցաւ ի մեզ Տէր Յիսուս
 և կենսագործեաց զաստիանութիւնս մեր. զի դառնալն
 400 աստ ոչ փոխարկութիւն ըստ բնութեանն է, այլ խոնար-
 հութեան Արարչին առ իւր արարածս: Եւ որպէս վասն
 Պետրոսի գրեալ է, թէ Դարձաւ ի մարմինն, ոչ եթէ ի
 մարմինն փոխեցաւ: Եւ բազում ուրեք այլ նոյն աւ-
 րինակ երևի ասացեալ, որպէս Դարձաւ Յիսուս զաւրու-
 403 թեամբ Հոգոյն, և Դարձ առ մեզ Աստուած Փրկիչ մեր:

Եւ եթէ բազումք յաստուածային զիրս հաւասա-
 րէն ասեն ոչ գնելով, այլ հրաժարեցուցանելով՝ զայս
 քեզ ուսուցանէ Գրիգոր Աստուածաբանն: Եւ զի ծնաւ,
 այլ ի կուսէ, և զծնեալն կոչէ մարգարէն Ընդ մեզ Աս-
 410 տուած, և կերակրեցաւ կաթամբ, և զոր մարգարէն յի-
 շէ, այլ նա էր որ զսակաւ նկանալան ի բազմահաղարան ա-
 ճեցոյց: Թէ սոսկ [մարդ]ոյ էր մարմինն ո՞րք ընդդէմ
 ինչ ասէր, ապա թէ Աստուծոյ մարմին էր՝ մի՛ իրրեւ
 զհասարակաց մարմին կարծիցես. և ի մնուր եղաւ պա-
 415 տանաւք . . . տեայ, և որ ի կարգին է: Այլ զմարմին
 հրեշտակք պարաբերեցին. և ի թեթեւ ամպոյն նստաւ.
 և Վախճանաւ և շարժմամբ են ճանապարհք նորա ըստ
 մարգարէին. և զգուշացեալ պահէր զաղայսն ամենայն

94—96—«Ոչ ի գործոց արդարութեան զոր արարաւ մեք». Տիս. Գ,
 5. 96 2. Ըստնա 98 2. ոչն էր 102—«Եւ դարձաւ ի մարմինն եւ ա-
 սե». Գործք Առ. Թ, 40 102 2. էթէ 103 2. եւ բազ ուրուք 104 Ղուկ.
 Գ, 14. 105 Սաղմ. 2Գ, 5. 106 2. էթէ 111 2. աճեցոց 112 2.
 սոսկ . . . ոչ էր խոնարհութեան մի քանի տառ ընդուած 2. ընդդէմ
 115 2. մի երկու տառ անվերժանելի 2. էջ 184^ա. 116 2. հրեշտակք 117 նա-

յիւրաքանչիւր ժամանակի. և մինչ էր յորովայնի կուսին՝
 420 ստեղծանէր զամենայն մանկունսն ըստ պատկերի իւրոյ,
 Զանդործս իմ տեսանելով՝ որպէս մարգարէն ասէ, թէ
 Մինչև ստեղծեալ է զքեզ՝ յորովայնէ գիտեմ զքեզ. և
 քաղցն և ծարաւն ոչինչ զապականութիւն ցուցանեն
 տէրունեան մարմնոյն, զի յետ քառասուն աւուր թոյլ
 425 ետ մարմնոյն քաղցնուլ, այն՝ որ ասէ թէ Քաղցեաց ընդ
 քեզ ոչինչ ասացի. և դարձեալ թէ Ոչ ուտեմ զմիս
 զուարակաց. և որ ազաղակէր՝ եթէ որ ծարաւի իցէ,
 [եկեսցէ] առ իս և արբցէ. և հաւատացելոցն ասէ՝ Գեառք
 յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց խաղաղացեալ ի կեանսն
 430 յաւիտենից: Եւ եկեալ կամաւ և ճոխութեամբ ի խաչն
 Աստուածորդին ընդդէմ կործանմանն դնել զբարձրու-
 թիւնն, և անարգել յարձակմանն՝ զքաջութեամբ տա-
 րածելն, և դատապարտութեան ճաշակմանն՝ առնու կե-
 րակուր իւր զեզի չարաչար ըմպելով քացախ, այն որոյ
 435 վիրաւքն բժշկեցաք. և մարգարէն Դաւիթ ասէ՝ Առա-
 քեաց զբան իւր և բժշկեաց զնոսա յապականութենէ:
 Տես զինչ մեկնէ զայս Յոհան Ոսկէբերան. Այլ թէպէտ և
 կաթնասուն եղև, կրեաց զարամութիւն և զաշխատու-
 թիւն, այլ ոչ ըստ այնմ ապականացու, և որ ի կար-
 440 գին է:

Լուսմ Ա, 3. 119 2. մինչ էր 120 2. մանդունսն 121 Սաղմ.
 ՃԼԸ, 16. 121 2. թե 122—«Մինչև ստեղծեալ էիր յորովայնի,
 գիտեմ գիտեմ». Նրեմ. Ա, 5. 125—«Թե քաղցեաց, եթ ինչ ոչ ասա-
 ցից». Սաղմ. ԽԹ, 12. 126 Սաղմ. ԽԹ, 13. 127 2. էթէ 127 Յովն.
 է, 37. 129 2. յորովանէ 2. բղխեսցեն 128—130—«Գեոսք յորովայնէ
 նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան». Յովն. է, 38. 131 2. ընդ-
 դէմ 134 2. չարչար 135 — 136—«Առաքեաց զբան իւր եւ բ-
 ժշկեաց զնոսա, եւ փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց»:
 Սաղմ. ՃԶ, 30. 137 2. թէպէտ

[Բ.]

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք.

Երևանու առէ. Որ եկն և միաւորութիւն գործեաց
Աստուծոյ և մարդոյն, քանզի մեր ոչ կարեցելոյս այլ-
աւրինակաբար ինչ կցորդութիւն ընդունել զանապա-
3 կանութեան, եթէ ոչ նորա եկեալ էր առ մեզ. զի անտե-
սանելի և աներեւոյթ ելովն՝ ոչինչ մեզ աւգուտ առնէր:
Արդ՝ եղև տեսանելի, զի ըստ ամենայն մասին կցորդու-
թեան առջուք զանապականութիւն: Ընդունայն և ստորի
են ամենայն որ զանաւրինութիւնն անարգեն զԱստու-
40 ծոյ և զմարմնոյս փրկութիւնս ուրանան և զվերստին
ծնունդն նորա անպատուեն, ոչ գոյ ընդունական ասե-
լով զանապականութիւն:

Նորէն. Արդ՝ եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մար-
մին անապական յանապական կուսէ:
45 Եւ «ոչ» Գրէգոր առէ. Զմեր զհողեղ[էն] զրնու-
թիւնս զգեցաւ և խառնեաց յանապական աստուածու-
թիւնն, զի տացէ մեզ զիւր զանմահութիւնն, և զապա-
կանացու մարմինս մեր խառնեաց յանապականութիւն
աստուածութեանն, զի զրնութիւնս մեր անապականս
20 գործեցէ:

Եւ Արևանու առէ. Եւ համայն Աղամ յերկնէ յեր-
կիր իջոյց, բայց Քրիստոս յերկրէ յերկինս եհան. Աղամ
զանմեղն յապականութիւն և ի դատապարտութիւն մա-
հա իջոյց, իսկ Քրիստոս զայս անապական և լուծիչ
25 մահու եցոյց. յաղագս այնորիկ ուր ապականեցաւ մար-
մինն՝ անդ առաքէ զիւր մարմինն, և ուր ըմբռնեցաւ
մարդկային բնութիւնս մահուամբ՝ անդ ցուցանէ Քրիս-

Տող 1 2. վկայութիւնք քառք լուսանցում. 5 2. եկեալ էր
10 2. զվերըստին 13 2. սգեցաւ 15 2. զհողեղ 16 2. սգեցաւ
20 2. գործեցէ 22 2. իջոց 24 2. իջոց 25 եղ 184^բ 26 2. ընպո-

տոս զմարդկային ոգին որ իւրն էր, զի ուր սերմանեցաւ
 ապականութիւն՝ անգուստ ծաղեցէ անապականութիւն,
 50 և այնպէս հաղորդս արացէ իւրում՝ անապականութեանն
 և անմահութեանն. քանզի Աստուած էր, որ
 ապականէր և ջնջէր զաւարութիւն ապականութեան և
 զգեցուցանէր մարմնոյն զանապականութիւն:

Եւ եկիւ առ յապագս աներջնապէս և անապական
 55 քննութեանն Տէառն. Ապասաւորեաց կոյսն ի ձեռն անապա-
 կանութեանն Քրիստոսի, պահեաց միշտ զկուսութիւնն
 վասն զի միշտ անապականութեանն փափագեաց. եղև մայր
 անապականութեանն [թեանն] և ոչ կարաց լինել աղախին ասա-
 կանութեան, քանզի յորում ստեղծաւ անապական շա-
 40ւեղ՝ ապականութեանն լինել ոչ կարէր, յեզումն անփորձ
 ամուսնութեանն խորհրդապէս ոչ կարէր ապականութեանն
 տեղի դասնել, քանզի ոչ կարէր զանապականութիւնն
 պարտել ապականութիւն:

Եւ երանելին Զեհեքիէ. Զի որպէս Ադամ եղև
 45 սկիզբն այնոցիկ, որ լուծանին յանապականութենէն յա-
 պականութիւն, նոյնպէս և Տէրն մեր եղև սկիզբն այնո-
 ցիկ, որ լուծանին յապականութենէ յանապականութիւն:
 Ադամ ապականեցաւ և ծնունդք իւր ըստ նմանութեանն
 նորա, իսկ Տէրն մեր խափանեաց զապականութիւն իրրև
 50 ինքն ընդ ապականութեամբ ոչ փակեցաւ, զի ոչ դտաւ
 ի ներքոյ մեղաց. զի ուր թագաւորէ մեղք՝ անդ տիրէ
 ապականութիւն: Եւ վասն այնորիկ ոչ տիրեաց ապակա-
 նութիւն ի Տէր մեր, զի ոչ թագաւորեցին ի նմա մեղք:

Նորէն. Մարմինն որ էր յարարածոց ոչ երբեք ան-
 55 կաւ ի հնազանդութիւն աստիանեալ մտաց, այլ միացաւ

նեցաւ 28 2. իւրն եր 29 2. ծաղեցէ 30 2. այնպէս 2. արացէ
 31 2. աստուած եր 33 2. սգեցուցանէր 38 2. անապականութեանն
 39 2. անապական յուսանցում ութեանն—անապականութեանն
 2. շաւեղ—շառաւէղ 40 2. կարեր 41 2. կարեր 44 2. Զեւնոր
 45 2. սկիսքն 2. յապականութենէն 47 2. յապականութենէ

Բանին, զգեցաւ զնա և եղև մարմին անապական երկնա-
ւոր Բանին, իբրև այն թէ յիսկութենէ աստուածու-
թեանն իցէ:

Եւ Քնն Բարսիլ առ Ապողինար ասէ. Որպէս մահա-
60 նացուս այս զգենլով զանմահութիւն՝ ոչ ևս մեռանի, և
ապականացուս այս զգենլով զանապականութիւն՝ ոչ ևս
ապականի, նոյնպէս և միտք աստուածացեալք միաւո-
րութեամբ Աստուծոյ Բանին՝ ոչ փոփոխին. այլ զոր աւ-
րինակ սպիտակութիւն ասու ներկեալ դունով ծիր[անւ]ոյ
63 ոչ երկգոյն այլ մի, նոյնպէս և միտք պայծառացեալք և
աստուածացեալք մի[ա . . ոչ երկու այ. առաջ . . . ք],
քանզի ոչ այլ ինչ կամին միտքն և այլ ինչ բանն: Եւ
որպէս հրացեալ երկաթ իմանամ՝ հուր և երկաթ, նոյն-
պէս և զՅիսուս զԱստուածն Բան մարդացեալ:

70 Եւ Գրէգոր Ասորո-աշաբանն ասէ. Ի կուսէն յառաջ
եկեալ ի Մարիամայ անճառաբար և առանց աղտոյ, վա-
սըն զի ոչինչ աղտ ուր Աստուած է և որով փրկութիւնն:

Նորին. Բանզի այնպէս է, որպէս վասն մեր է զե-
նումն և պատմութեան անապականութեան է և կոչի. և
75 կատարեալ ոչ վասն աստուածութեանն միայն, քան զոր
ոչինչ է կատարելագոյն, այլ յաղագս առելոյն և աւծե-
լոյ աստուածութեամբն և եղելոյ որպէս որ էաւծն, հա-
մարձակիմ ասել զուզաստուած:

Եւ Յահան Երո-ասղիմացի ասէ. Վասն զի բոցատերև
80 վարդն յանապականէն Մարիամայ անապականաբար ծաղ-
կեալ:

Նորին. Յայտնեցաւ այսաւր Աստուած ի կուսէ և

56 2. սգեցաւ 57 2. յիսկութենէ 60 2. սգենով վրան աւելացրած ել
= սգենելով 61 2. սգենլով 63 2. այ բանին 2. փոխփոխին ուղ-
ղուած փոփոխին 64 2. ծիրոյ 66 փակագծուածը կարմրադեղով ջնջուած,
ընթերցուածն էլ ոչ ապահով 71 էջ 185^ա 77 2. էեաւծն 78 Այս հա-
տուածն առնուած է Աստուածաբանի ի Պատմն ճառից, զի ՀԲ «գուրաս-
տուած»: 79 2. էմացի 80 2. մարիամա 81 Այս հատուածը Ոսկերե-
ւանի անուամբ ՀԲ. «Բոցատերև վարդն յանապական Մարիամայ

կոյսն մնաց կոյս, և եղև մայր, զի պատճառք անապականութիւնն և ապականութիւն երբեք ոչ գործեաց:

85 Եւ Եպիփան աշակէս ասէ. Քանզի ամենայն ինչ կաթողութիւն է Աստուծոյ՝ և զապականելին փոխել յանապականութիւն, և որ ի վերայ երկրիս է կատարել յանապականութիւն, և մի՛ ոք զարմացի:

Նորին. Ամենակարող Բանն Աստուած զգեցեալ մարմին յապականեալ մարմնոյս և անդէն ընդ առնուլն իսկ գործեաց զնա անապական:

Թեոփի Եպիսկոպոս Անկիւբեայ Բրէ. Ահա յայտնեցաւ այսաւր Աստուած ի կուսէ և կոյսն մնաց կոյս անարատ, զի որ առանց ապականութեանն էր՝ զապականութիւն ոչ 95 գործեաց, և որ ստեղծիչ անմահութեանն՝ զոք ոչ ապականէր:

Եւ Պրոքլ ասէ. Վասն այնորիկ և Պարբիելէ տալ զաւերիս Ծննդեանն ասէ, նա ինքն փրկեցէ զԺողովուրդս իւր յամենայն յապականութենէ. իսկ արդ՝ աշխարհս 100 ոչ կարէ փրկել ի մեղաց, որ ինքն ապականութեամբ յերկիր անկեալ է:

Եւ Յոհան Ուկեբեբան ասէ. Զարմանամ ընդ ոմանս որ ասեն, թէ մինչ ապականացու չէր մարմինն Քրիստոսի զիարդ զնշան բեւեռացն և զխոցուածն եցոյց Թումայի. 105 եցոյց և յամուծ արար զհերիտիկոսս, զի և յառաջքան զյարութիւնն անապական էր:

անապական ծաղկեաց». Ոսկ. յար. («բոցատերե»): «Բոցատերե վարդ» ասացուածը կայ եւ «Խորհնացու» Վարդապետի ձառում: 84 Հմմտ. «Յոհանու Եմա Հրպտի. Այլ վասն զի բոցաւէր և (—բոցատերե) վարդն անապական ծաղկեալ յանապական կուսէն. բանն աստուած ծնաւ ի կուսէն և կոյսն մնաց անապական, զի ուր պատճառ անապականութեան էր՝ անդ ոչ գործեցաւ ապականութիւն» (2եռ. № 1538, էջ 29^p): 85 2. Էպիփան 87 2. ի վերա 88 2. զարմացի 89 2. ամէնակարող 92 2. Եպիսկոպոս 98 2. փրկեցէ 99 2. յամենայն յապականութենէ 101 2. անդեալ է 102 2. ոսկեբերան 106 2. անապական ապական էր

Նորին. Այլ է մարմին և այլ է մահ և այլ ապական-
 նութիւն. ոչ մարմին ապականութիւն է և ոչ ապակա-
 նութիւն մարմին: Ապականացու է մարմին, այլ ոչ ապա-
 410 կանութիւն մարմին և մահկանացու է մարմին, այլ ոչ
 մահ մարմին: Քանզի մարմին զործ եղև Աստուծոյ, իսկ
 ապականութիւն և մահ ի մեղաց ի ներքս մտին:

Եւ Կէ-բէղ Աղէսանբէրաշէ ասէ. Աստուած Բանն
 ստորարկեաց զինքն յոր ոչն էր, զի և յոր ոչն էր մարդն
 415 եզիցի բնութիւնն աստուածային գերունակութեանն ար-
 ժանաւորութեամբ և զառ նայն միաւորութեամբ վա-
 յելչաւորեալ, և վերաբերեցաւ առաւել քան զբնու-
 թիւնն, կամ թէ վերաբերեաց քան զբնութիւնն զան-
 յելզին իբրև զԱստուած. վայել էր զանապականելին բըռ-
 420 նահարել զբնութենէ զընդ ապականութեամբ, զի զնա
 ի բաց փոխեցէ յապականութենէն: | Էստ Բանն Աս-
 տուած մարմին ի կուսէն անապական և ոչ գտաւ ապա-
 կանութիւն ի նմա, քանզի որպէս ուր իցէ լոյս՝ անդ
 անգործ է իսկ ամենեւին խաւար, այսպէս առ ընթեր
 425 եղելոյ անապականութեանն՝ ամենեւին ոչ գտանի ապա-
 կանութիւն:

Եւ Տէմբէկ ասէ. Քանզի որպէս խորհեցաւ զի Աս-
 տուծոյ առաւ ի կողէն Աղամայ և եղև կին, այսպէս և
 երկրորդ Աղամայ այս է Քրիստոս, յանապականէ և յա-
 430 նազաոյ մարմնոյ կուսին մարդ եղև անապական մնալով
 Աստուած:

Նորին. Ծնաւ ի սրբոյ կուսէն և զկուսութիւնն ոչ
 ապականեաց, քանզի Աստուած էր անապականելի մարմ-
 նովն ծնիցեալն. թաղիւր և ի բաց քակէր զապականու-

135 թիւնն իբր Աստուած անապական և մարմնացեալ Աստուծոյն Բան զմահուն խայթոց անապական մարմնովն ջնջեաց անդէն իսկ ի մարմնա[նա]լն:

Նորէն. Մարմինք մեր ի ցանկութենէ և ի մեղաց, իսկ Բանին Աստուծոյ ի Հոգոյն սրբոյ եղեալ, սուրբ և
440 անապական, իսկ մերս լի է ապականութեամբ և ամենայն աղտեղութեամբ, վասն այսորիկ նա մատուցաւ փոխանակ մեր, զի մեք փոխումք յապականութենէ յանապականութիւն, կալով մեզ ի նմա, զի և նա իսկ կայ ի մեզ, յորս ուտեմք զմարմինն նորա անապական, որ է
445 Հաց կենաց, և ընպեմք զարիւն նորա պատուական:

Եւ Փիլատոսն Եպիսկոպոս ասէ. Ապա ուրեմն առանց ամենայն ցանկութեանց և ապականութեանց մարդացեալ Աստուածն Բանն. և ոչ ապականութիւն յիւրաքանչիւր բուսոյ, և ոչ մի ինչ ի շարժմանց Հոգոյ և մարմնոյ, որ
450 է բոյս իւրաքանչիւր ապականութեանց. այլ որպէս էրն յառաջ քան զստունգանելն մարդն ա[ռա]ջին, զայն եցոյց Բանն ի մարմնին իւր ի միանալն անապական, բնութիւնն և ոչ մեղք, մարմին և Հոգի և ոչ ապականութիւն:

Նորէն. Ապա ուրեմն վարքն Քրիստոսի ի ծննդէն
455 նէն Քրիստոսի մինչև յսաչն միաւորութիւն ճշմարիտ առանց մեղաց և ապականութեան եղեալ ըստ բնութեան նախաստեղծին Ազամայ անապական:

Նորէն. Արդ՝ մարմին ճշմարիտ և ցանկութիւն ոչ ի նմա և ոչ հաշումն, և ոչ բնական հիւանդութիւն, և
460 ոչ մի ինչ պատճառս ապականութեան և զատապարտութեան Ազամայ, այլ ազատ և անմահ և անապական, որպէս մարմին Աստուծոյ: Եւս ի կուսէն մարմին

136 2. հայթոց 137 2. ի մարմնալն 138 2. ի ցանկութենէ 140 2. ամենայն 142 2. յապականութենէ 146 2. իպիսկոպոս 147 2. ամենայն 150 2. իւրաքանչիւրաքանչիւր 151 2. աջին 154 2. ի ծննդնդէնէն քի 162 2. եսու

անապական և շունչ անփոփոխելի զի անամուսնութեամբ
մարմնացաւ, զմարմինս մեր արար մարմին իւր, և զշունչս
465 մեր շունչ գիմի իւրոյ, բնակեցաւ յարգանդի իննամեայ,
որ նկարէ զսաղմն յարգանդի, ծնաւ որպէս մարդ և ոչ
եւրոյժ զկուսութիւն ծնաւորին, այլ եկաց մնաց միշտ ա-
նապական կոյսն:

| Պէտքոս Սիւնեաց Եպիսկոպոս ասէ. Ծնանիւր Էմանուէլն
470 մարգացեալ յիմանալի բովս զմարդկութիւնն յաստուա-
ծութեանն հրացուցեալ. քանզի Աստուած է և ամենայն
ինչ հետեւի սմա. Թէպէտ ամպ և մեղ շուրջ զնովաւ,
այլ ինքն լոյս է. Թէպէտ և ի բաժակ մահու խոնարհի,
այլ ինքն անմահ է և անապական:

475 Նորին. Ի սուրբ և յանարատ կուսէն միացոյց իւր
մարմինն և արար երկնաւոր հաց, վասն իւր ի յերկնուստ
իջիցն, և կոչեաց կերակուր և ըմպելի և կեցուցիչ ճա-
շակաւդաց զնա:

Դասէ՞ Հարգացի ասէ. Քանզի նախաժամանէր Հոգին
480 ի կոյսն քան զյղացումն մարմնոյն. ըստ որում Հոգի
սուրբ եկեացէ ի քեզ. որոյ յայտ է ոչ ի նախաղացեալ
սաղմի, կամ Թէ ի մարմնի, կամ ի կերպացելում սուրբ
Հոգին եկեալ միացի կամ բնակեացէ ըստ նոցա, այլ
ի նախահոգելից արգանդին և նախասրբեցելում, ըստ
485 նորա միայն գիտութեան: Նա ինքն ասէր. Յորեանա-
հաան սուրբ մարմինն ծնցի, և ի նմին մնացեալ ի նոյն
շաղեալ կատարեցի: Էջ յարգանդ կուսին առեալ ի նմա-
նէ զծառայի զկերպ. ոչ յանապականէ և ապականացու,
այլ յապականացուէս անապականացուեալ, և յախտա-
490 կրելոյս անախտ: Զի Թէ ոչ անախտ էր սա՝ և ոչ սպա-
նանել զախտսն ոչ կրելով ոչ կարէր. և եթէ ոչ անա-

169 հջ 186^ա 169 Ձ. Եպիսկոպոս 172 Ձ. մեղ 173 Ձ. խորարհի 175 Ձ.
միացոց 177 Ձ. բնակելի 179 Ձ. նախաժամանէր 184 Ձ. ի նախահոգելից
187 Ձ. եջ 189 Ձ. անապականացուեալ—արդեօք անապականացու-
ցեալ? 191 Ձ. նախ ոչ կրելով, յետոյ ոչ-ը կարմրադեղով զնշած 191 Ձ. էթէ

պական՝ զապականութիւն ոչ կարէր լուծանել. և եթէ ոչ անմահ՝ նորա մեռանելովն և խափանիւր ոչ մահ. զի յանախտին ապաքէն ակտք մեռանին, և յանապականին

495 ապականութիւն լուծանի, և յանմահին՝ մահ:

Եւ Յոհան Կարնոյ Կաղապարքի Կէ. Դարձեալ ի մերում մահուանն ապականութեան[ն սո]եղծումն գործառնի. իսկ Աստուածն Բանն մեր ասացելովն մահացեալ, անապական և անմահ մնացեալ նովին մարմնովն. քանզի զմե-

200 ռանելն ստուգապէս, հիւսանիլն կտաւով և ի դամբանի ներծածկիլ և ի զինահարիլն բղխումն արեանն պիտառոցէ զկենդանին մնալ: Ապա եթէ զմեզս եբարձ, որ է մայր ապականութեան, զիմրդ ասեն թէ մարմինն նորա ապականացու էր: Մի զճշմարտութիւնն ստուեր համա-

205 բեցիս. ոչ յաղթահարի ի կրից անապական և աստուածախառն մարմինն. քանզի որ զքեզն ապականէին՝ նոքաւք վարեցաւ ծննդեամբ [յառաջ] եկեալ, զի զապականագործութեան քակտեցէ զհիմունս. ածեաց հասակաւ, զի զաճմանն կատարելագործեցէ, զյապակա-

210 նութենէն ածելականս եղեալ. թլփատի մարմնով, զի մերկացուցէ ի մէնջ զծածկոյթ ապականութեանն: Անախտակրելի և անապական մաքրութեամբ մեռանի ապակա-

192 2. էթէ 194 2. ապաքեն 196 2. քաղաքեցի 197 2. կարմրադեղով ջնջուած են փակագծուած երեք տուրք, որով ստացուած է ապականութեան եղծումն: Հմեղ. Այս Յոհան Կարնեցոյ, առանց հեղինակի՝ անուան յիշատակութեան, ամբողջ մի հասուած կայ Թեոդորոս Գոթենաւորի մեջ. «Դարձեալ ի մերում մահուանն ապականութիւն և եղծումն գործառնի. իսկ Աստուածն Բան մերառեցելովն մահացեալ, անապական և անմահ մնաց նովին մարմնովն: Քանզի զմեռանիլն ստուգապէս՝ հիւսանիլն կտաւովն և ի տապանի ներծածկիլն վկայեն ճշմարտութեանն (սպաղի 2ևռադիւր՝ ճշմարտութիւնն). և ի զինահարիլն բխումն արեանն պիտառոցէ զկենդանին մնալ»: Ընդդէմ Մայրագումացոյն, Կէ 153, Վեներ. 1833.

200 2. ստուգապէս 203 2. էթէ 2. էբարձ 204 2. համարեցիս 207 փակագծուածը կարմրադեղով ջնջած 208 2. քակտեցէ 209 2. զաճմանն կատարելագործեցէ զյապականութենէն 210 2. մերկա-

- նութիւն խոտոյս ի միաւորութեան հրոյն, և ծաղիկն
անապական ծաղիկ յարմատոյն | ի հուր անապականա-
215 բար: Եւ նովին հրով ջրարբի և զարդանայ, զի միաւո-
րութիւն ի վեր քան զմիտս եղեալ. և միարան ծոց կու-
սին, և կոյսն աստուածածին, և անապական ծնեցեալն:
Քանզի զի՞նչ անխախտուն պահել ծնաւզին զկուսութիւնն,
եթէ ոչ զանապականութիւն ցուցանէ և զաստուածու-
220 թիւն ծնիցելոյն: Արդ անապականսւն նոյնպէս կայցի,
որպէս գրեցեալն. Ես ատեղծանեմ ոչ ի կորուստ ապա-
կանութեան, այլ անապականաւ դործեցեալք անապա-
կանացեալքն. և նմին ժառանգակիցք ի նոյն պատկեր
նորոգին փառաց ի փառս: Այսպէս ապականացուարունն
225 և անկատար անապականութեանն և կատարելութեան
տուաւդ ի կուսածին միաւորութենէն, քանզի զմահկա-
նացութեանն և զապականութեանն և զչարչարականու-
թեանն շարժմունս անճառ միաւորութեամբն Բանն, որ-
պէս նախն ասացի լուծեալ զադարեցոյց:
- 230 Արդ եթէ ըստ Վաղինտինոսին, և Ատերայն, և
Նստորին, և Սամոստացոյն, և Թէոդորոտին, և Արտե-
մայն, և Մարկեղեայն, և Դէոդորիտեայն, և Փոտինոսի,
և Ղևոնի Հռովմայացոյ, և զատապարտեալ ժողովոյն
Քաղկեդոնի ի հերձուածողական սահմանին հաստատեալ
235 մոլութեանն՝ լոկոյ մարդոյ ասել զմարմինն զՏէրունոյն
ապականացու և անփառաւոր, և կամ ըստ Աւերիոսի
ամբարշտութեանն, որ ի գերեզմանէն ասաց միանալ և
փառաւորիլ, ապա ուրեմն նախ մարդ իբրեւ զմարդ լոկ,
և ապա աստուածացի յետոյ. ըստ այսմիկ և մահ մե-
240 ծարոյ քան զկեանս, և անշունչ գերեզման քան զկեն-

ցուցէ 214 եջ 186^p 216 2. զմիտս 219 2. էթէ 223 2. նմին
դժուարութեամբ և կարգացում 226 2. զմահկանութեանն 228 2.
միաւորութեամբ. ն բանն. 230 2. էթէ 2. ա. տերայն 231 2.
սամոստացոն եւ Թէոդորոտին նոյն գրով տղամիջում աւելացրած ող-
232 2. մարկեղեան եւ դէոդորիտեան 235 հաւանականաբար—մո-

դանի տաճարն, և գերեզման անապականածին և աս-
տուածածին, և կոյս մարդածին և ապականածին: Արդ
զիւրդ մարդիկ անապականութեան ակն կալցին, զապա-
կանութիւն ճաշակելով դեղ ըստ նոցա: Եւ զորոյ՞ գերկ-
245 նաւոր Աշամայ զգենումք զպատկեր, զանապականութիւն
և զփառս ըստ Պաւղոսի, և զինչ այս ամենայն, եթէ ոչ
լքանելի և ընդունայն մոլորութիւն: Արդ եթէ որ ա-
պականացու գոլ զմարմինն Քրիստոսի համարեցի մինչև
ցյաբութիւնն անկատար ըստ երկաքնակացն ամբարշտու-
250 թեան, ապա ուրեմն և մեղաց ընդունակ ասէ զնոյնն,
քանզի ապականութիւն ի մեղաց բնաւորեցաւ յազգս
մարդկան:

Այլ քանզի զանապականն զգեցաւ մարմին, զոր
նախ քան զյանցանսն ունէր մարդն առաջին, վասն այ-
255 նորիկ նովին եղև մարդ կատարեալ, զոր և Պետրոս յայա-
նապէս վարդապետէ եթէ Ոչ մարմին Քրիստոսի ետես
զապականութիւն, սակս որոյ և անապականութեան ստո-
րանկեալ եղև. և անապական ասեմք անգստին յար-
զանդէ | սրբոյ և աստուածածին կուսին Մարիամու և
260 ոչ ասեմք յազգս թլփատութեանն և կերակրոյն և
ըմպելոյն և չարչարանացն ապականացու գոլ զմարմինն
Քրիստոսի: Եւ զարձեալ թէ ապականացու ասէք զյա-
զգս թլփատութեանն և չարչարանացն և կերակրոյն և

չորութեանն 245 2. սգենումք 246 2. էթէ 247 2. էթէ 248 2.
քի համարեցի 253 2. սգեցաւ 255 2. նորին 256 2. էթէ 2. քի
257 2. սասկ 259 եջ 187^ա: Այս իջից սկսած միմյեւ 192^թ էջ, ընդ
ամենը վեց քերք, 2-ը կրկնագիր է: Թուղթը ծածկուած է դեղին, փայլուն
և մածուցիկ նիւթով ևւ այդ մածուցիկ շերտի վրայ գրուած: Տակի գրու-
թիւնը ժամանակագրական ցանկեր են, ամենայն հաւանականութեամբ միև-
նոյն գրչից: Այս առաջին ևւ միակ անգամն է պատահում ինձ հայ 2-րդ
բուդր-կրկնագիր: 261 2. ընպելոյն 263 2. թլփատութեանն և չարչարանացն և կերակրոյն և

- ըմպելոյն, ապա զայս խոստովանիմք. նախ Մովսէս աւրի-
 265 նադրեաց զայս հրամանաւ Աստուծոյ, խոյ անարատ
 ասաց զՔրիստոս և հաւ զենեալ վասն փրկութեան հե-
 թանոսաց. սափորն մանանայիւ, և կարմիր մանեալ. Աս-
 տուած մարդացեալ. և փայտ նոճիւ Այսքանք աւրինակ
 են Աստուծոյ Բանին մարմնաւորութեան անապականու-
 270 թեամբ փրկել զհեթանոսս: Ասէ՛ Թլփատելն Սեփորաւ
 զմահ տրդել, որչափ ևս առաւել թլփատելն Քրիստոսի,
 որ ասէ՛ն Մարմին իմ՝ անապական կերակուր է, և արիւն
 իմ՝ անապական ըմպելի է: Արդ և թէ ապականութիւն է,
 զիարդ է քաւութիւն մեղաց, զոր Պաւղոս [ասէ], եթէ
 275 Որ մեռեալն էիք մեղաւք և ապականութեամբ՝ այժմ՝
 կենդանացայք թլփատութեամբն Քրիստոսի. զի թլփա-
 տելն զկարգս աւրինին է ընուլ. իսկ խոցումն կողին և հո-
 սումն արեան և ջրոյն այսպէս ունի. նախ՝ ի կողէն զյան-
 ցումն ապաւառել, երկրորդ՝ արեամբն գնել զբոլոր զտի-
 280 եզերս, երրորդ՝ ջրովն վերստին ծնանել յորդեգրութիւն.
 իսկ պարատումն կամ բղխեալն՝ բազմապատիկք են առ
 ի յԱստուծոյ որք հաւատով պաշտին ի միջի մերում և
 ոչ քննութեամբ, զի բազում անգամ ի ժամ սոսկալի
 պատարագին փթրանքն, և ի բաժակէն նոյնպէս արտաքս
 285 անկանելն ապականութիւն ասիցես, քաւ մի՛ լիցի. այլ
 աստուածային[ն] կոտորի և ոչ բաժանի, բաշխի և ոչ
 հատանի, ուտի և ոչ ապականի, անդգուշալի և ոչ ա-
 նարգի. զի ապակ[ան]եալ անցեալն կոչի, ապականի ներ-
 կայն, ապականելի ապառնին. ապականութիւն ի վերայ
 290 ամենեցուն հասարակաց: Դարձեալ՝ ապականեալ ոմն նիւթ.
 ապականի կենդանի, անցանի և մոխիր լինի. ապակա-
 նելի՝ բնութեամբ ունելով յինքեան զյառաջիկային եղ-

264 2. ընպելոյն 2. խոստովանեմք 2. մուսէս 267 2. մանայնայիւ
 270 ելք Գ. 25. 279 2. ընքելի 2. էթէ 274 2. էթէ 277 2. խոսումն
 280 2. յորդեգրութիւն 281 Հմեղ. պարատել—թլփատել ըստ Հին
 Բռ-ի. 287 2. անդգուշալի 288 2. ապակեալ անկեալն կոչի 289—
 290 2. ի վերա ամենեցուն

ծուփն, իսկ ապականութիւն՝ նոյն ինքն լուծումն մարմ-
 նոյն յեղեղութենէ յոչ լինելութիւն. զի այսպիսիքս ոչ
 295 բարդին ի վերայ անաւրէնութեան Փրկչին: Արդ ուր Տէր
 է, անդ մեղք ոչ են. և ուր մեղք ոչ՝ անդ ապականու-
 թիւն ոչ մարթի ասել. այլ առ այս արդեաւք ասէ երա-
 նելին Յոհան, զի Նա և յանմարմնութեանն իբրև մարդ
 կերակրեցաւ առ Աբրահամաւ: Եւ յետ յարութեանն
 300 թէպէտ եկեր, այլ ոչ ըստ կերակրոյն ապականացու է:
 Արդ եթէ ըստ կերակրոյն ապականացու է՝ ապա և նախ
 քան զմարմնանալն ապականացու է, և յետ յարութեանն.
 որ քաւ և մի լիցի. և եթէ ըստ [աճմանն] ապականա-
 ցու՝ ապա և ի միւս անգամ գալստեանն: Արդ ի լինելն
 305 մարմին՝ եկաց մնաց Բանն Աստուած ի [յերկինս] առ աստուա-
 ծութեանն իւրոյ և առեալ զմարմին և զգեցեալ. և ի
 զգենութն իսկ ցուցեալ անապական: Եւ ոչ ասեմք երկուս,
 զոմն անապական և զոմն ապականացու, զի արատ ապա-
 կանութեան ոչ գտանէր ի սուրբ մարմինն:

310 Նոյն. Ծնեալն ի Հաւրէ՝ անճառ յիւր անձնն և
 յէութիւնն, ծնաւ այսաւր ի կուսէն անճառ և անապա-
 կան և անքնին. ոչ էն Աստուած կարեաց համբեր,
 քանզի աստուածապէս ծնաւ զԱստուածն, և ոչ կոյսն
 զապականութիւն կրեաց, քանզի հոգեպէս ծնաւ զհո-
